ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի ապրիլի 02-ի թիվ 4 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/04»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար արխիվի դարակաշարերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 31.03.2025թ.-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 02.04.2025թ. տրամադրված պարզաբանումը՝

<u>Հարցադրում</u>

«Մենք առաջարկում ենք հրավերով սահմանված տեխնիկական պարամետրերը գերազանցող որակական չափանիշներով արխիվային դարակաշար: 1. Դարակները լամինացված փայտանյութից (ԴՍՊ) չեն, այլ ամբողջ դարակաշարը՝ կոնստրուկցիան, կողային սյուները և դարակները պատրաստված են «MS Strong» տիպի մետաղից, 1,2 - 1,5 մմ հաստությամբ, մետաղյա ուժեղացված անկյունային պրոֆիլից, բարդ հատվածքի, 38×38 մմ չափերով, հավաքվում է բոլտ-ռեզբա, դարակները նույնպես մետաղյա են 30 մմ կողային ուժեղացնող անկյունակով, որի դեպքում ԴՍՊ-ի համեմատ քաշով 3 անգամ ավելի շատ բաշխված բեռի տարողություն է ապահովում, իսկ ԴՍՊ-ի դեպքում դա մոտ 50 կգ է: Մեր առաջարկած դարակաշարը ունի ավելի քան 150 կգ բաշխված բեռի տարողունակություն: 2. Հաջորդ առավելությունը ԴՍՊ-ի համեմատ, հակահրդեհային կանոնների պահպանումն է, այսինքն՝ կրակ բռնկվելու դեպքում մեր առաջարկած մետաղն ապահովում է կրակի անհամեմատ քիչ տարածումը, բացի այդ, կրակի դեպքում դարակաշարը չի փլվում և կույտ չի առաջացնում, իսկ կույտային կրակները անհամեմատ դժվար է հրդեհաշիջելը: Մեր առաջարկած դարակաշարերի ուղղահայաց մետաղական դետալները Ձեր կողմից պահանջված «առնվազն 25x25 մմ» չափի պողպատյա քառանկյուն խողովակների համեմատ, բաց տիպի են և ավելի հրակայուն, քան Ձեր առաջարկած փակ տիպի խողովակները, որոնք կրակի ազդեցության տակ շուտ են դեֆորմացվում: 3. Չափսերի առումով բարձրությունը 270 սմ (շեղում՝ +-2 %), լայնություն՝ 150 սմ (շեղում՝ +-2 %), խորությունը՝ վերը նշված մետաղից 30 կամ 40 սմ (Ձեր ընտրությամբ): Ըստ ԳՕՍՏ 55525-2013 պահանջների չափերը կարող են լինել 30 կամ 40 սմ: 4. Ի դեպ, մեր առաջարկած դարակաշարերը համապատասխանում են ISO 9001, ISO 14001 միջազգային ստանդարտներին և ԳՕՍՏ 55525-2013 -ի (ГОСТ стеллажи для хранения 55525-2013) տեխնիկական պահանջներին: 5. Տեխնիկական բնութագրով սահմանված մնացած չափանիշները համապատասխանում են: 6. Հաշվի առնելով վերոշարադրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 109-րդ կետի պահանջները՝ խնդրում ենք պարզաբանել, թե Հրավերով սահմանված տեխնիկական պահանջները գերազանցող՝ մեր կողմից առաջարկվող դարակաշարերը որակական հատկանիշներով ապահովում են արդյոք Ձեր՝ որպես Պատվիրատուի կարիքի բավարարումը: 7. Քանի որ էլեկտրոնային աճուրդների իրականացման համակարգը պարզաբանման հարցման դեպքում ֆայլ կցելու հնարավորություն չի ընձեռում, մեր առաջարկվելիք ապրանքի նկարներն ուղարկում ենք գնման ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:»

Պարզաբանում

«Առաջարկվող ապրանքները պետք է համապատասխանեն «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/04» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/04» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում հնարավոր մասնակիցների կողմից հայտեր չներկայացվելու և ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում, հետագայում նմանատիպ ապրանքատեսակի ձեռքբերում իրականացնելիս պատվիրատուի կողմից կքննարկվի ներկայացված առաջարկը:»

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/04» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արուս Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010 511-787:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@court.am:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: